ՃՁԳ.

Ի պէլրղատ և ի վիտին մեծամեծ աղմուկք յարուցեալ են ի մէջ զօրաց տաճկաց. ի վիտին սատակեալ են ի միմեանց աւելի քան 2000ք։ Իսկ ի պէլրղատ եէնիչէրիք բոնութեամբ գրաւեալ յինքեանս զբերդն, հալածեցին զփաշայն, և մարտ եղեալ թօփով, և թիւֆէնկիւ կռուին ընդ քաղաքին, որոց հրացանից ձայնք զտիւ և զգիշեր ոչ դադարին։ Բայց այժմ ի թագաւորէն եկեալ երեք փաշայք բազում զօրօք անդրէն դարձուցին զբերդն և սկսան սատակել զապստամբսն զայնոսիկ. և ի սահմանացն Պէլրղատու վարել զամենայն ալակալիցիս։ (Հ. Յովհաննէս առ Մելգոնեան, 1755 Յունիս 18. [տեղի?])։

ՃՁԿ.

Ծանիր զի խուրջրցի տէր յակոբն գրեալ էր մեզ, թէ յուսամ հասուցանել ձեզ ևս զայն օրհնեալ պատկերն աստուածածնայ հասանխալայ վանիցն, հրաշագործ առ լուսահոգի հայրն մեր զինդրեալ վկայութիւնն. եթէ հասցի ի ձեռս ձեր, գիտէք զինչ զգուշութիւն առնել պարտիք, և որպիսի զգուշութեամբ մեզ հասուցանել։ (Մելգոնեան առ Հ. Միքայել, 1755 սեպտ. 6. [Ս. Ղազար])։

ՃՁՂ.

Ի Լիսպօնայ, որ է մայրաքաղաքն Փորթօկալու, շարժ եղեալ և բազում տունք փլեալ, և յետոյ երկիրն յերիս տեղիս պատառեալ, և անտի հուր ելեալ և այրեալ զբոլոր քաղաքն, և իբր 130000, այսինքն հարիւր երեսուն հազար մարդիկ այրեալք և բովանդակ նաւքն արքունիք պատրաստականք ի յիլիմանն խորտակրեալ և ևս յայլս յոմանս քաղաքս ևս շարժք և կործանմունք լուաք։ (Մելգոնեան առ Հ. Միքայել, 1755 դեկտ. 20. [Ս. Ղազար])։

ՃՁԲ.

Հայրութիւնդ ոչ գիտէ եթէ ի Հռոմ զինչ անցան ի միջի մերում Հայոցս, վասն արարողութեանց մերոց, վասն զի լադինացիք յոժարեցան յոյժ հաւանեալ, որպէս արար զտէքրէթ Պապն։ Իսկ մերայնոց գծուցքն ընդիմանան, զի որպէս կամէ նոցա յեկեղ[ե]ցին հայոց առնէ, որպէս անգլուխ անդամ ոչ միաբանեալ միմեանց։ Արդ մեք յայնքան որ հրամանաւ Պապի բռխանորդին բարցաք ջուրն ի բաժակէն ըստ արարողութեանց մերոյ մասանց, և ըստ Տիսին մերոյ, իսկ նոքա ոչ մինչև ցայս կետս։ Միւս ևս գտի ի Հռոմ զիմն նամակ զոր գրեալ է յոհաննէս Կոլոտ կոչեալ Պատրիարքն ի Բոլին Կոստանդինոսի. գրելով առ քարտինալ Պէլլուքաս և ողջոյն տեառն Պապին, որ յոյժ իմաստութեամբ, որ անդ է տեսանել զամենայն, ըստ հաւատոյ մասանց յոյժ հաւանեալ լադինացիք աստ, և ես զնա այժմ ունեցայ Հայ գրով և լադին, զոր գրեալ է յամի տեառն 1738 ի դեկտեմբերի 4։ (Մեսրոպ եպս. Քեռնեա Արտաքեան առ Մելգոնեան, 1756 յունվարի 30. [Հռոմ])։

ՃԿ.

Աղէքսանդր Կաթուղիկոսն ստուգապէս վախճանեցաւ և այժմ ընտրեն Կաթուղիկոս զԱհագին Սահակ վարդապետն. թէպէտ և ոչ կամի երթալ վասն ահի օրհնած աղին։ (Հ. Իգնատիոս առ Մելգոնեան, 1756 փետր. 15. Կ. Պոլիս)։